ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ

Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ Վարչության
25 ապրիլի 2024 թվականի N 130-Լ որոշմամբ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Պատասխանատու ստորաբաժանում	Գանձապետական գործառնությունների սպասարկման բաժին
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	26/04/2024թ.
Տարածում	Գանձապետական գործառնությունների սպասարկման բաժին Գանձապետարան
Այլ դրույթներ	Սույն կանոններն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվում «ԱյԴի Բանկ» ՓԲԸ Վարչության 2023 թվականի հունիսի 15-ի N 207-Լ որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդերի ակտիվների պահառության ծառայությունների մատուցման» կանոնները
Առնչվող փաստաթղթեր	ՀՀ քաղաքացիական օրենսգիրք «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենք «Ներդրումային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը» կանոնակարգ 10/04 «Ներդրումային ֆոնդերի ներդրումային սահմանափակումները» կանոնակարգ 10/10 «Ներդրումային ֆոնդի պահառուի կառուցվածքի եվ գործունեության նկատմամբ լրացուցիչ պահանջները» կանոնակարգ 10/31

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ 3

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 4

ԳԼՈՒԽ 4. ՊԱՀԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ 4

Ֆոնդի դրամական միջոցների պահառություն 5

Ֆոնդի ակտիվներում ներառված արժեթղթերի պահառություն 8

Ֆոնդի ակտիվներում ներառված այլ ակտիվների պահառություն 9

Ֆոնդերի ակտիվների և պարտավորությունների հաշվառումը 9

Ֆոնդի ակտիվների նկատմամբ հսկողության իրականացումը 10

ԳԼՈՒԽ 5. ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 11

Ֆոնդի ակտիվներով գործարքների սպասարկում 11

Ֆոնդի կառավարչի հանձնարարականների կատարում 12

ԳԼՈՒԽ 6 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ 14

Ֆոնդի կառավարչին հաշվետվությունների ներկայացումը 14

Ֆոնդի կառավարչի կողմից տեղեկությունների ներկայացումը 15

ԳԼՈՒԽ 7. ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՊԱՀԱՌՈՒԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 16

ԳԼՈՒԽ 8. ՖՈՆԴԻ ՄԻԱՑՈՒՄ, ԼՈՒԾԱՐՈՒՄ (ԴԱԴԱՐՈՒՄ), ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԵՎ ՊԱՀԱՌՈՒԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ 16

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնները (այսուհետ՝ Կանոններ) կարգավորում են «ԱյԴի Բանկ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներդրումային ֆոնդերի ակտիվների պահառության իրականացման շրջանակներում ներդրումային ֆոնդի կառավարիչների և Բանկի միջև ծագող հարաբերությունները՝ ֆոնդի ակտիվներով գործառնությունների իրականացման, ներդրումային ֆոնդի ակտիվների հաշվառման, տեղեկատվության փոխանակման, հաշվետվությունների տրամադրման, ինչպես նաև կատարվող գործարքների հսկողության, ներդրումային ֆոնդի ակտիվների կազմի ու կառուցվածքի համադրման, ներդրումային ֆոնդի զուտ ակտիվների արժեքի և փայերի (բաժնետոմսերի) հաշվարկային արժեքի հաշվարկման հսկողության մասով:

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

2. Կանոններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները՝

1) **Պահառու**՝ «ԱյԴի Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն,
2) **Ֆոնդ**՝ ներդրումային ֆոնդեր,
3) **Հանձնարարականի կատարում՝** Ֆոնդի կառավարչի հանձնարարականի հիման վրա՝ Պահառուի կողմից իր մոտ առկա ծրագրային լուծումների, ծրագրային համակարգերի, ակտիվների (այդ թվում՝ բանկային հաշիվներից դրամական միջոցների) փոխանցումներ իրականացնելու համար վերջինիս տրամադրված առցանց համակարգերի կիրառմամբ գործողությունների կատարում, որն անհրաժեշտ է վերոհիշյալ համակարգերում համապատասխան հանձնարարականի ձևավորման համար,
4) **Պայմանագիր/Համաձայնագիր՝** Ֆոնդի կառավարչի և Պահառուի միջև կնքված պայմանագիր/համաձայնագիր, որը կարգավորում է Ֆոնդի ակտիվների պահառության շրջանակներում կողմերի իրավահարաբերությունները,
5) **Ֆոնդի ընթացիկ հաշիվ՝** առևտրային բանկերում Ֆոնդի անունով բացված հաշիվ, որին փոխանցվում են Ֆոնդերի փայերի թողարկման արդյունքում ձևավորված դրամական միջոցները կամ որին փոխանցվում են դրամական միջոցները տվյալ Ֆոնդի փայեր ձեռք բերելու նպատակով,
6) **Ֆոնդի ներդրումային հաշիվ՝** բրոքերային ծառայություն մատուցող անձին սպասարկող բանկում կամ բրոքերային ծառայություն մատուցելու իրավասություն ունեցող ընկերությունում Ֆոնդի անունով բացված հաշիվ, որը կիրառվում է բրոքերային ծառայությունների մատուցման նպատակով,

7) **Ֆոնդի ավանդային հաշիվ՝** առևտրային բանկում Ֆոնդի անունով բացված բանկային հաշիվ, որով իրականացվում են ավանդային գործառնություններ,
8) **Ֆոնդի դեպո հաշիվ՝** բրոքերային ծառայությունների մատուցման նպատակով բրոքերային ծառայություն մատուցող անձի մոտ Ֆոնդի անունով բացված արժեթղթերի հաշիվ,
9) **Բրոքերային ծառայություն՝** «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի իմաստով ներդրումային ծառայություն:

3. Սույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, դրանց հիման վրա ընդունված ՀՀ կենտրոնական բանկի և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Բանկի և ներդրումային ֆոնդի կառավարչի միջև հարաբերությունները, ինչպես նաև այդ հարաբերություններով պայմանավորված իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված ՀՀ Կենտրոնական բանկի և այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն Կանոններով, ինչպես նաև Բանկի և ներդրումային ֆոնդի կառավարչի միջև կնքված Պայմանագրով/Համաձայնագրերով:

5. Բանկի և ներդրումային ֆոնդի կառավարչի միջև ներդրումային ֆոնդի ակտիվների պահառության շրջանակներում ծագող առանձին հարաբերությունները կարգավորվում են «ԱյԴի Բանկ» ՓԲԸ «Արժեթղթերի պահառության գործունեության իրականացման կարգ»-ով:

ԳԼՈՒԽ 4. ՊԱՀԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Ֆոնդի ակտիվների պահառություն

6. Պահառուն իրականացնում է Ֆոնդերի ակտիվների պահառությունը՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով, Պահառուի կանոններով, ինչպես նաև Պահառուի և Ֆոնդի կառավարչի միջև կնքված Պայմանագրերով/Համաձայնագրերով սահմանված կարգով:

7. Կախված Ֆոնդերի տեսակից և դրա նկատմամբ Կանոններով կիրառվող դրույթներից Պահառուի կողմից Ֆոնդի կառավարչին մատուցվող ակտիվների պահառության ծառայությունները կարող են ներառել.

1) Ֆոնդի ակտիվների ի պահ ընդունումը, պահպանումը,
2) Ֆոնդի ակտիվների հաշվառումը,
3) Ֆոնդի անունից կատարված գործարքների սպասարկումը և դրանց հիման վրա ակտիվների փոխանցումը,
4) Ֆոնդի ակտիվների կազմի և ծավալի ստուգում,
5) Ֆոնդի ակտիվներով իրականացվող ներդրումային սահմանափակումների, ինչպես նաև փայի հաշվարկային արժեքի հաշվարկման հսկողությունը,
6) «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, դրանց հիման վրա ընդունված ՀՀ կենտրոնական բանկի և այլ նորմատիվ իրավական ակտերով, ֆոնդի կանոններով, ինչպես նաև Պահառուի և Ֆոնդի կառավարչի միջև կնքված Պայմանագրերով/Համաձայնագրերով սահմանված այլ ծառայությունները:

Ֆոնդի դրամական միջոցների պահառություն

8. Պահառուն Ֆոնդի դրամական միջոցների պահառության ներքո իրականացնում է.

1) Ֆոնդի ընթացիկ հաշիվներում առկա դրամական միջոցների պահառություն,
2) Ավանդային գործառնությունների շրջանակներում ֆոնդի դրամական միջոցների պահառություն,
3) Բրոքերային ծառայությունների շրջանակներում ֆոնդի դրամական միջոցների պահառություն,
4) Օտարերկրյա գործարքների իրականացման շրջանակներում օտարերկրյա պահառուին հանձնված ֆոնդի արտարժութային դրամական միջոցների պահառությունը:

9. Ֆոնդի ընթացիկ հաշիվներում առկա դրամական միջոցների պահառությունը Պահառուի կողմից կարող է իրականացվել անմիջականորեն Պահառուի մոտ ֆոնդի անունով բացված հաշվի միջոցով: Պահառուն կարող է իրականացնել ֆոնդի ընթացիկ հաշիվներում առկա դրամական միջոցների պահառություն Ֆոնդի դրամական միջոցները Ֆոնդի ընթացիկ հաշվի սպասարկումն իրականացնող այլ բանկին ի պահ տրամադրելու և հաշիվներով գործառնությունների կատարման (փոխանցման և փոխարկման) հանձնարարականների ներկայացման միջոցով՝ համաձայն Ֆոնդի կառավարչի, Ֆոնդի ընթացիկ հաշվի սպասարկումն իրականացնող բանկի և Պահառուի միջև կնքված եռակողմ պայմանագրի:

10. Ավանդային գործառնությունների շրջանակներում Ֆոնդի դրամական միջոցների պահառությունն իրականացվում է Պահառուի կողմից ավանդի գումարը ավանդը ներգրավող ՀՀ կամ օտարերկրյա բանկին ի պահ տրամադրելու միջոցով մինչև ավանդային պայմանագրերով սահմանված ժամկետի ավարտը՝ համաձայն ավանդը ներգրավող բանկի և Ֆոնդի կառավարչի միջև կնքված երկկողմ պայմանագրի:

11. Ֆոնդի դրամական միջոցները Ֆոնդի ավանդային հաշվին փոխանցելու հանձնարարականին կից Ֆոնդի կառավարչի կողմից Պահառուին պետք է ներկայացվի նաև կնքված ավանդի պայմանագրի պատճենը (վերջինիս ներկայացման անհնարինության դեպքում ավանդի կնքվելիք պայմանագրի նախագծի պատճենը), եթե Պայմանագրով/Համաձայնագրով այլ բան սահմանված չէ: Պահառուն նշված հանձնարարականը կատարում է միայն այն դեպքում, երբ ավանդի պայմանագիրը (կամ նախագիծը) բավարարում է հետևյալ պայմաններին.

1) ավանդը ներգրավող բանկը ստանձնել է պարտավորություն Պահառուին տրամադրելու Ֆոնդի ավանդային հաշվի մնացորդի (հնարավորության դեպքում նաև հաշվեգրված տոկոսների) վերաբերյալ օրական հաշվետվություններ (տեղեկանք, քաղվածք) հաշվետու օրվա ժամը 23:59-ի դրությամբ, իսկ վերջինիս անհնարինության դեպքում գործառնական օրվա փակման պահի դրությամբ մինչև հաշվետու օրվան հաջորդող օրվա ժամը 10:00-ն, եթե պայմանագրով այլ ժամկետ սահմանված չէ,
2) ավանդը ներգրավող բանկը ստանձնել է պարտավորություն ավանդի ժամկետի ավարտին կամ ավանդի պայմանագրի վաղաժամկետ լուծման պարագայում Ֆոնդի ավանդային հաշվին առկա միջոցները ամբողջությամբ փոխանցել բացառապես Ֆոնդի ընթացիկ հաշվին, իսկ այլ հաշվի փոխանցելու դեպքում՝ միայն Պահառուի գրավոր համաձայնությունը ստանալու դեպքում,
3) ավանդը ներգրավող բանկը ստանձնել է պարտավորություն ավանդի պայմանագրում փոփոխություն իրականացնել կամ պայմանագրին կից համաձայնագրեր կնքել միայն Պահառուի գրավոր համաձայնությունը ստանալու դեպքում,
4) ավանդը ներգրաված բանկը ավանդի դիմաց վճարվող տոկոսագումարները կփոխանցի Ֆոնդի ավանդային հաշվին կամ Ֆոնդի ընթացիկ հաշվին:
5) Կանոնների 11-րդ կետով նախատեսված ավանդի պայմանագրի կամ կնքվելիք ավանդի պայմանագրի նախագծի պատճենը Ֆոնդի կառավարիչը կարող է չներկայացնել Պահառուին, եթե ավանդը ներգրավող բանկի և Պահառուի միջև կնքվել է համաձայնագիր/հուշագիր:

12. Բրոքերային ծառայությունների շրջանակներում Պահառուի կողմից Ֆոնդի դրամական միջոցների պահառությունն իրականացվում է դրամական միջոցները

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

բրոքերային ծառայություն մատուցող կազմակերպությանը ի պահ տրամադրելու միջոցով՝ համաձայն Ֆոնդի կառավարչի հետ կնքված պայմանագրի:

13. Ֆոնդի ակտիվներով բրոքերային ծառայությունները իրականացվում են Ֆոնդի և բրոքերային ծառայություն մատուցող կազմակերպության միջև կնքված պայմանագրի հիման վրա, որի պատճենը նախքան բրոքերային ծառայության իրականացումը Ֆոնդի կառավարչի կողմից ներկայացվում է Պահառուին:

14. Ֆոնդի կառավարչի կողմից տրված ներդրումային հաշվին դրամական միջոցների փոխանցման հանձնարարականը Պահառուն կատարում է, եթե բրոքերային ծառայություններ մատուցող կազմակերպության և Ֆոնդի կառավարչի միջև կնքված պայմանագիրը բավարարում է հետևյալ պայմաններին.

1) Պահառուն ունի հասանելիություն ներդրումային հաշվին կամ միջոցները ի պահ ընդունած ընկերությունը ստանձնել է պարտավորություն Պահառուին տրամադրելու Ֆոնդի ներդրումային հաշվի մնացորդի (հնարավորության դեպքում նաև հաշվեգրված տոկոսների) վերաբերյալ օրական հաշվետվություններ (տեղեկանք, քաղվածք) հաշվետու օրվա ժամը 23:59-ի դրությամբ, իսկ վերջինիս անհնարինության դեպքում գործառնական օրվա փակման պահի դրությամբ մինչև հաշվետու օրվան հաջորդող օրվա ժամը 10:00-ն, եթե պայմանագրով այլ ժամկետ սահմանված չէ,
2) Պահառուն ունի հասանելիություն դեպո հաշվին կամ բրոքերային ծառայություններ մատուցող կազմակերպությունը ստանձնել է պարտավորություն գործարքի ավարտից հետո Պահառուին տրամադրելու գործարքների մանրամասների վերաբերյալ տեղեկատվություն բրոքերային ծառայություններ մատուցող կազմակերպության գործառնական օրվա ավարտից մինչև տվյալ կազմակերպության աշխատանքային օրվա ավարտը: Գործարքների մանրամասների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ներառի մինչև բրոքերային ծառայություններ մատուցող կազմակերպության գործառնական օրվա ավարտը կնքված բոլոր գործարքների էական պայմանները (գործարքի առարկա, գործարքի ծավալ, առքի կամ վաճառքի գին, գործարքի կնքման ամսաթիվ, վերջնահաշվարկի պայմաններ և այլն):

15. Եթե Ֆոնդի կառավարիչը և համապատասխան ընկերությունը ապահովում են ներդրումային հաշվի նկատմամբ Պահառուի համար բավարար հսկողական մեխանիզմներ, ապա Կանոնների 14-րդ կետով նախատեսված պահանջը կարող է կիրառվել մասամբ՝ այն կարգավորելով պայմանագրի շրջանակներում:

Ֆոնդի ակտիվներում ներառված արժեթղթերի պահառություն

16. Պահառուն Ֆոնդի ակտիվներում ներառված արժեթղթերի պահառության ներքո իրականացնում է.

1) Պահառուի մոտ Ֆոնդերի անունով բացված արժեթղթերի հաշիվներում առկա արժեթղթերի պահառություն,
2) Օտարերկրյա գործարքների իրականացման շրջանակներում օտարերկրյա պահառուի մոտ բացված Պահառուի անվանատիրոջ կամ Ֆոնդի հաշիվներում առկա արժեթղթերի պահառությունը:

17. Ֆոնդի ակտիվներում ներառված արժեթղթերի պահառությունը Պահառուի կողմից իրականացվում է սույն կանոններով և Ֆոնդի կառավարչի միջև կնքված Պայմանագրերով/Համաձայնագրերով սահմանված կարգով:

18. Բրոքերային ծառայություն մատուցող տեղական կազմակերպության կողմից Ֆոնդի ակտիվներում ներառված արժեթղթերի պահառությունը իրականացվում է տեղական բրոքերային ծառայություն մատուցող կազմակերպության և Ֆոնդի կառավարչի միջև կնքված երկկողմ պայմանագրով սահմանված կարգով:

19. Բրոքերային ծառայություն մատուցող տեղական կազմակերպության միջոցով գործարքի արդյունքում ձեռքբերված Ֆոնդի արժեթղթերը Ֆոնդի դեպո հաշվին փոխանցվելուց հետո համարվում են տվյալ կազմակերպության կողմից ի պահ ընդունված: Ֆոնդի դեպո հաշվին առկա արժեթղթերը բրոքերային ծառայություններ մատուցող տեղական կազմակերպությունը պարտավոր է փոխանցել Պահառուի Ֆոնդի անունով բացված արժեթղթերի հաշվին գործարքի ավարտից հետո առավելագույնը մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

20. Օտարերկրյա արժեթղթերի ձեռքբերման գործընթացը կազմակերպում է Պահառուի կամ Ֆոնդի օտարերկրյա պահառուի միջոցով: Ձեռքբերման գործընթացի արդյունքում Ֆոնդի ակտիվներով ձեռքբերված օտարերկրյա արժեթղթերը հաշվառվում են օտարերկրյա պահառուի մոտ բացված Պահառուի անվանատիրոջ կամ Ֆոնդի հաշիվներում:

21. Ֆոնդի ակտիվների հաշվին ձեռքբերված օտարերկրյա արժեթղթերի պահառության առանձնահատկությունները սահմանվում են Ֆոնդի կառավարչի և օտարերկրյա պահառուի միջև կնքված պայմանագրերով և Պահառուի և Ֆոնդի կառավարչի միջև կնքված Պայմանագրերով/Համաձայնագրերով:

22. Պահառուի կողմից Ֆոնդի այլ ակտիվների (այդ թվում՝ ածանցյալների) հաշվառումն իրականացվում է Ֆոնդի կառավարչի կողմից Պահառուին ներկայացված տեղեկությունների հիման վրա:

Ֆոնդի ակտիվներում ներառված այլ ակտիվների պահառություն

23. Անշարժ գույքի պարագայում Պահառուն Ֆոնդի կառավարիչից և/կամ Կադաստրի կոմիտեից կամ համանման գործառնություններ իրականացնող պետական մարմնից ստանում է տեղեկատվություն Ֆոնդին պատկանող գույքերի վերաբերյալ:

24. Անշարժ գույքի վաճառքի պարագայում Պահառուն տալիս է նախնական համաձայնություն, որը առնվազն ներառում է տեղեկատվություն վաճառվող գույքի արժեքի, կադաստրային ծածկագրի և հասցեի վերաբերյալ:

25. Անշարժ գույքի գնահատումն իրականացնելու նպատակով Պահառուն ստանում է տեղեկատվություն Ֆոնդի կառավարիչից և/կամ անկախ գնահատում իրականացնող ընկերության կամ անշարժ գույքի գործակալության կողմից:

26. Պահառուն Ֆոնդի ակտիվներում ներառված այլ ակտիվների պահառությունը, որոնց կարգավորման շրջանակները սահմանված չեն սույն Կանոններով, իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ, դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերով, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, Պահառուի կանոններով, Ֆոնդի կանոններով, ինչպես նաև Ֆոնդի կառավարչի և Պահառուի միջև կնքված Պայմանագրով/Համաձայնագրով սահմանված կարգով:

Ֆոնդերի ակտիվների և պարտավորությունների հաշվառումը

27. Պահառուի կողմից իրականացվում է Ֆոնդի ակտիվների կազմի և շարժի համադրում: Այդ նպատակով Պահառուն գործադրում է լավագույն ջանքերն ապահովելու կազմի և շարժի համադրումը ծրագրային լուծումների միջոցով:

28. Ֆոնդի ակտիվների և պարտավորությունների հաշվառումը Ֆոնդի ակտիվների և պարտավորությունների վիճակի և շարժի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, գրանցման համակարգ է՝ ակտիվներով գործառնությունների և դրա արդյունքում առաջացող պարտավորությունների էլեկտրոնային հաշվառման միջոցով:

29. Պահառուն Ֆոնդի ակտիվների և Ֆոնդի գծով առաջացած պարտավորությունների օրական հաշվառում է իրականացնում Պահառուի կողմից կիրարկվող ծրագրային լուծումների միջոցով:

30. Պահառուն Ֆոնդի ակտիվների և պարտավորությունների հաշվառման համար հիմք է ընդունում Ֆոնդի ակտիվներով իրականացված գործառնությունների համար Ֆոնդի կառավարչի և/կամ վերջինիս կողմից պատվիրակված անձի կողմից ներկայացված հանձնարարականները, Ֆոնդի ակտիվներով իրականացված գործառնությունների համար Ֆոնդի կառավարչի և/կամ վերջինիս կոնտրագենտների կողմից ներկայացված գործարքների պայմանների վերաբերյալ հիմք հանդիսացող փաստաթղթերը, Ֆոնդի հաշիվները սպասարկող կազմակերպությունների կողմից Պահառուին

ներկայացված համապատասխան հաշիվների մնացորդների, շարժի և/կամ տոկոսագումարների վերաբերյալ հաշվետվությունները (տեղեկանք, քաղվածք), որոնց հաշվառումն իրականացվում է Ֆոնդի կանոններով սահմանված դրույթներին համապատասխան:

31. Կանոնների 30-րդ կետով սահմանված հիմք հանդիսացող փաստաթղթերը Պահառուն հաշվառում, արխիվացնում և պահպանում է դրանց ստանալուց անմիջապես հետո էլեկտրոնային և/կամ փաստաթղթային ձևով Պահառուի ներքին իրավական ակտերով սահմանված ընթացակարգերով:

32. Պահառուի ծրագրային լուծումների միջոցով Ֆոնդի ակտիվների և պարտավորությունների հաշվառման գործընթացն իրականացվում է Պահառուի Վարչության նախագահի հրամանով հաստատված Ֆոնդի ակտիվների և պարտավորությունների հաշվառմանը վերաբերող ներքին ընթացակարգերին և Ֆոնդերի կանոններին համապատասխան:

Ֆոնդի ակտիվների նկատմամբ հսկողության իրականացումը

33. Պահառուի կողմից իրականացվում է Ֆոնդի ակտիվների զուտ արժեքի և փայերի (բաժնետոմսերի) հաշվարկային արժեքի հաշվարկի, Ֆոնդի ակտիվներով գործարքների, Ֆոնդի ակտիվների կազմի և շարժի, ներդրումային սահմանաչափերի պահպանման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ կենտրոնական բանկի և այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված այլ հսկողական գործառույթներ: Վերոնշյալ գործառույթներն իրականացվում են «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքին, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին և Ֆոնդի կանոններին (կանոնադրությանը) համապատասխան և Ֆոնդի կառավարչի կողմից Պահառուին վերջինիս պահանջով կամ առանց դրա ներկայացված հանձնարարականների, հաշվետվությունների, տեղեկանքների, բացատրագրերի և այլ փաստաթղթերի ուսումնասիրության և Պահառուի կողմից ծրագրային համակարգերի կիրառման արդյունքում ձեռք բերված տեղեկատվության միջոցով:

34. Պահառուն ապահովում է փայերի (բաժնետոմսերի) թողարկման, տեղաբաշխման, հետգնման (մարման) և փոխանակման գործընթացի արդյունքում Ֆոնդի միջոցների փոխանցումը «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքին, դրանից բխող նորմատիվ իրավական ակտերին և Ֆոնդի կանոններին (կանոնադրությանը) համապատասխան: Պահառուն սույն կետում նշված գործընթացների նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ֆոնդի փայերի ռեեստրավարման համակարգում առկա, առանձին դեպքերում նաև Ֆոնդի կառավարչից ստացված տեղեկատվության հիման վրա:

35. Պահառուն Կանոններում նշված գործընթացների կատարման ընթացքում ՀՀ օրենսդրությամբ, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտերով և Ֆոնդի կանոններով

(կանոնադրությամբ) սահմանված դրույթների անհամապատասխանության բացահայտման դեպքում այդ մասին 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է ՀՀ կենտրոնական բանկին և Ֆոնդի կառավարչին:

ԳԼՈՒԽ 5. ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ֆոնդի ակտիվներով գործարքների սպասարկում

36. Պահառուի կողմից Ֆոնդի ակտիվներով գործարքների սպասարկումը և դրանց հիման վրա ակտիվների փոխանցումներն իրականացվում են բացառապես տվյալ Ֆոնդի կառավարչի կողմից/ վերջինիս կողմից պատվիրակված անձի կողմից Պահառուին տրված հանձնարարականների հիման վրա Պայմանագրով/Համաձայնագրով սահմանված ժամկետներում և կարգով, բացառությամբ որոշ ակտիվների թողարկողների կորպորատիվ գործողություններով պայմանավորված պարտադիր գործարքների կամ գործառույթների (արժեթղթերի համախմբում, բաժանում, փոխարկում, չեղարկում, արժեթղթերի պարտադիր հետգնումով պայմանավորված փոխանցումներ, տոկոսագումարների կամ շահութաբաժինների վճարումների ընդունում և այլն) իրականացման դեպքերի, երբ Պահառուն նշված գործարքները կամ գործառույթները կարող է իրականացնել առանց Ֆոնդի կառավարչի հանձնարարականների:

37. Ֆոնդի ակտիվներով գործարքների սպասարկման նպատակով Ֆոնդի կառավարչի կողմից հանձնարարականները պետք է ներկայացվեն Կանոններով, ինչպես նաև Պահառուի և Ֆոնդի կառավարչի միջև կնքված Պայմանագրերով/Համաձայնագրերով սահմանված կարգով և պայմաններով:

38. Արժեթղթերով կամ դրամական միջոցներով գործարքների կատարման նպատակով Ֆոնդի ակտիվների փոխանցման, վերջնահաշվարկի հանձնարարականներին կից Ֆոնդի կառավարչի կողմից Պահառուին պետք է ներկայացվեն նաև.

1) գործարքի էական պայմանները (գործարքի առարկա, գործարքի ծավալ, գործարքի կնքման ամսաթիվ, վերջնահաշվարկի պայմաններ և այլն) նկարագրող փաստաթուղթ,
2) Կանոններով, ինչպես նաև Պահառուի և Ֆոնդի կառավարչի միջև կնքված Պայմանագրերով/Համաձայնագրերով սահմանված այլ տեղեկությունները և/կամ փաստաթղթերը:

39. Կանոնների 38-րդ կետով սահմանված տեղեկությունները և/կամ փաստաթղթերը հանձնարարականներին կից ներկայացնելու անհնարինության դեպքում վերջիններս կարող են ներկայացվել գործարքի կնքումից անմիջապես հետո:

40. Կանոնների 36-րդ կետով սահմանված հսկողական մեխանիզմների կիրառման շրջանակներում Պահառուն կարող է իրավասություն ստանալ հաստատելու Ֆոնդի կառավարչի կողմից բրոքերին ներկայացված դրամական միջոցների փոխանցման, ինչպես նաև փոխարկման հանձնարարականները:

41. Ֆոնդի կառավարիչը պարտավոր է Պահառուի կանոններով, Պահառուի և Ֆոնդի կառավարչի միջև կնքված Պայմանագրերով/Համաձայնագրերով և Պահառուի «Բանկի միջնորդությամբ դեպոզիտարիայի կողմից մատուցվող ռեեստրավարման և պահառության ծառայությունների սակագների մասին կանոններ»-ով սահմանված կարգով և չափով Պահառուին վճարել Ֆոնդի ակտիվներով գործարքների սպասարկման համար, եթե այդպիսի վճարներ սահմանվել են (կան):

Ֆոնդի կառավարչի հանձնարարականների կատարում

42. Ֆոնդի ակտիվներով գործարքների սպասարկման շրջանակներում Ֆոնդի կառավարչի կողմից Պահառուին ներկայացվող հանձնարարականները կարող են լինել հետևյալ տեսակների.

1) փոխանցման հանձնարարական, որը հիմք է հանդիսանում Ֆոնդի դրամական միջոցների փոխանցման համար,
2) վերջնահաշվարկի հանձնարարական, որը հիմք է հանդիսանում արժեթղթերով գործառնությունների իրականացման համար,
3) դրամական միջոցների փոխարկման հանձնարարական, որը հիմք է հանդիսանում Ֆոնդի՝ մեկ արժույթով արտահայտված դրամական միջոցներն այլ արժույթով փոխարկման համար,
4) չեղարկման հանձնարարական, որը հիմք է հանդիսանում նախկինում տրված փոխանցման, վերջնահաշվարկի կամ դրամական միջոցների փոխարկման հանձնարարականի չեղարկման համար,
5) հանձնարարականի լրացում, որը ենթադրում է նախկինում տրված փոխանցման, վերջնահաշվարկի կամ դրամական միջոցների փոխարկման հանձնարարականի չեղարկման և նոր փոխանցման, վերջնահաշվարկի կամ դրամական միջոցների փոխարկման հանձնարարականների համակցություն,
6) Պայմանագրով և դրա հիման վրա կնքված Համաձայնագրերով կարող են սահմանվել նաև այլ հանձնարարականներ՝ կախված գործարքների իրականացման նպատակից և բնույթից:

43. Ֆոնդի կառավարչի կողմից Կանոնների 42-րդ ենթակետով սահմանված հանձնարարականների ներկայացման համար կապուղի են դիտարկվում ՀՀ կենտրոնական բանկի ՍԻԲԻԷյՆԵթ համակարգչային ցանցը, S.W.I.F.T. համակարգը, Պահառուի կողմից առաջարկվող ծրագրային լուծումները, որոնց կիրառումն առանձին հանձարարականների

տրամադրման դեպքում, այդ թվում՝ նաև դրանց խափանման դեպքում այլընտրանքային կապուղիները սահմանվում են Ֆոնդի կառավարչի հետ կնքված պայմանագրերում:

44. Ֆոնդի կառավարչի հանձնարարականները Պահառուի կողմից կատարվում են, եթե դրանք չեն հակասում «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքին, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին, Ֆոնդի կանոններին (կանոնադրությանը) և Պայմանագրին/Համաձայնագրին:

45. Պահառուն Ֆոնդի կառավարչի հանձնարարականները կատարում և այդ մասին ծանուցում է Ֆոնդի կառավարչին Պահառուի և Ֆոնդի կառավարչի միջև կնքված Պայմանագրերով/Համաձայնագրերով սահմանված ժամկետներում և կարգով:

46. Արժեթղթերով գործառնությունների նկատմամբ Պահառուն իրականացնում է հետառևտրային հսկողություն: Եթե Պահառուի հիմնավոր կարծիքով Ֆոնդի կառավարչի կողմից իրականացված արժեթղթերով գործարքը հակասում է «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքին, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին, Ֆոնդի կանոններին (կանոնադրությանը), Կանոններին և Պայմանագրին/Համաձայնագրին, ապա Պահառուն գրավոր ծանուցում է Ֆոնդի կառավարչին այդ մասին՝ առաջարկելով ողջամիտ ժամկետներում իրականացնել հակադարձ գործարք՝ վերացնելով կնքված գործարքի հետևանքները:

47. Պահառուն մերժում է Ֆոնդի կառավարչի հանձնարարականի կատարումը, եթե.

1) հանձնարարականի կատարման համար Պայմանագրով/Համաձայնագրերով սահմանված վերջնաժամկետի դրությամբ տվյալ Ֆոնդի հաշիվներում առկա չեն համապատասխան ակտիվները,
2) ներկայացված հանձնարարականը պարունակում է անճշտություններ, թերություններ կամ բացթողումներ,
3) չի պահպանվել տվյալ հանձնարարականի ներկայացման ձևը կամ ժամկետը (եթե Պայմանագրով/Համաձայնագրով նման ձև և/կամ ժամկետ սահմանված են),
4) հանձնարարականի կատարումը հակասում է տվյալ Ֆոնդի ակտիվների պահառությունը կարգավորող իրավական ակտերին կամ Պայմանագրերին/Համաձայնագրերին,
5) Կանոններով սահմանված կամ որևէ այլ հիմնավոր պատճառով անհնար է տվյալ հանձնարարականի կատարումը:

48. Ֆոնդի կառավարչի կողմից ներկայացված չեղարկման հանձնարարականը կամ հանձնարարականի լրացումը կատարվում է, եթե Պահառուն դեռ չի ավարտել չեղարկման ենթակա հանձնարարականի կատարումը, իսկ վերջինիս կատարված լինելու դեպքում՝ եթե ակտիվների փոխանցման գործառույթում ներգրավված՝ Պահառուի

կոնտրագենտների կանոնները տվյալ իրավիճակում հնարավորություն են ընձեռում չեղարկելու հանձնարարականը:

49. Եթե Ֆոնդի կառավարիչը միաժամանակ ներկայացնում է փոխկապակցված հանձնարարականներ, որոնցից մեկի կատարումը տրամաբանորեն պայմանավորված է նախորդ հանձնարարականի կատարման արդյունքով, ապա Պահառուն հաջորդող հանձնարարականի կատարումը նախաձեռնում է միայն դրա կատարման համար անհրաժեշտ նախադրյալների (նախորդող հանձնարարականի կատարման արդյունքներով ձևավորված անհրաժեշտ պայմաններ, կոնտրագենտների պայմաններ, ժամկետներ և այլն) առկայության դեպքում: Այդ դեպքում հանձնարարականների կատարման (կամ չկատարման) վերաբերյալ Պահառուի կողմից Ֆոնդի կառավարիչներին ներկայացվող ծանուցումներն ուղարկվում են ըստ յուրաքանչյուր հանձնարարականի կատարման արդյունքների:

50. Ֆոնդի կառավարչի հանձնարարականի կատարումը մերժելու դեպքում Պահառուն այդ մասին ծանուցում է Ֆոնդի կառավարչին՝ վերջինիս հետ կնքված Պայմանագրերով/Համաձայնագրերով սահմանված կարգով և ժամկետներում:

51. Պահառուն չի երաշխավորում հանձնարարականներով նախատեսված գործառույթների կամ գործարքների իրականացումը, եթե դրանց իրականացումը կախված չէ Պահառուի գործողությունների պատշաճ կատարումից և պատասխանատվություն չի կրում այդ հիմքով, ինչպես նաև Կանոններով սահմանված դեպքերում հանձնարարականի կատարման մերժման արդյունքում Ֆոնդի կառավարչի կամ որևէ երրորդ անձի կրած վնասների համար:

ԳԼՈՒԽ 6 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Ֆոնդի կառավարչին հաշվետվությունների ներկայացումը

52. Պահառուն Ֆոնդի կառավարչի հետ կնքված Պայմանագրերով/Համաձայնագրերով սահմանված պարբերականությամբ, ծավալներով (բովանդակությամբ), կարգով և ժամկետներում Ֆոնդի կառավարչին/վերջինիս կողմից պատվիրակված անձին հաշվետվություն է ներկայացնում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի վերաբերյալ:

53. Կանոնների 52-րդ կետով սահմանված հաշվետվությունը Պահառուի կողմից Ֆոնդի կառավարչին/վերջինիս կողմից պատվիրակված անձին է տրամադրվում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող աշխատանքային օրվա ժամը 14:00-ն, եթե Պայմանագրով/Համաձայնագրով այլ ժամկետ սահմանված չէ:

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

54. Եթե նշված հաշվետվությունները պետք է ներառեն նաև Պահառուի կոնտրագենտներից կամ Ֆոնդի կառավարչից ստացած տեղեկությունները, ապա Ֆոնդի կառավարչի կոնտրագենտներից, Ֆոնդի ընթացիկ հաշիվները սպասարկող բանկերի կողմից ստացվող տեղեկությունները (հաշվետվությունները) Կանոններով սահմանված ժամկետում չստանալու դեպքում Պահառուն իրավունք ունի Կանոնների 52-րդ կետով նախատեսված հաշվետվություններում ներառել իրեն տրամադրված վերջին հայտնի տվյալները:

Ֆոնդի կառավարչի կողմից տեղեկությունների ներկայացումը

55. Ֆոնդի կառավարիչը Պահառուին ներկայացնում է տեղեկություններ Ֆոնդի ակտիվների հաշվին կատարված գործառնությունների, ինչպես նաև ֆոնդի հաշվին ստանձնված պարտավորությունների վերաբերյալ՝ Կանոններով և Պահառուի հետ կնքված Պայմանագրերով/Համաձայնագրերով սահմանված պարբերականությամբ, ծավալներով (բովանդակությամբ), կարգով և ժամկետներում:

56. Պահառուի հետ կնքված Պայմանագրերով/Համաձայնագրերով սահմանված պարբերականությամբ, ծավալներով (բովանդակությամբ) Ֆոնդի կառավարիչը Պահառուին ներկայացնում է Ֆոնդի ակտիվների զուտ արժեքի և փայերի (բաժնետոմսերի) հաշվարկային արժեքի հաշվարկի, Ֆոնդի ակտիվներով գործարքների, Ֆոնդի ակտիվների կազմի և շարժի, ներդրումային սահմանաչափերի պահպանման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ կենտրոնական բանկի և այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված այլ տեղեկություններ

57. Կանոնների 55-րդ և 56-րդ կետերով սահմանված տեղեկությունները Ֆոնդի կառավարչի կողմից Պահառուին է տրամադրվում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:00-ն, եթե Պայմանագրով/Համաձայնագրով այլ ժամկետ սահմանված չէ:

58. Ֆոնդի կառավարչի կողմից առանձին ծառայություններ այլ անձանց պատվիրակելու դեպքում Կանոնների 55-րդ և 56-րդ կետերով սահմանված տեղեկությունները կարող են ներկայացվել նաև համապատասխան պայմանագրերով կամ այլ կերպ տվյալ պարտավորությունը ստանձնած անձանց կողմից:

59. Անհրաժեշտության դեպքում, Պահառուի գրավոր հարցման հիման վրա, Ֆոնդի կառավարիչը Պահառուին է ներկայացնում իր ներքին ընթացակարգերն ու կանոնակարգերը, ինչպես նաև կնքված գործարքների կամ ստանձնված պարտավորությունների հիմք հանդիսացող փաստաթղթերի պատճենները:

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

ԳԼՈՒԽ 7. ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՊԱՀԱՌՈՒԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

60. Պահառուն Ֆոնդի ակտիվների պահառության շրջանակում իր պարտականությունների կատարման ընթացքում ՀՀ օրենսդրության, դրան համապատասխան ընդունված նորմատիվ իրավական ակտերի և Ֆոնդի կանոնների (կանոնադրության) պահանջների խախտումների և/կամ անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում դրանց մասին հայտնաբերման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային կամ թղթային եղանակով ծանուցում է ՀՀ կենտրոնական բանկին և Ֆոնդի կառավարչին:

ԳԼՈՒԽ 8. ՖՈՆԴԻ ՄԻԱՑՈՒՄ, ԼՈՒԾԱՐՈՒՄ (ԴԱԴԱՐՈՒՄ), ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԵՎ ՊԱՀԱՌՈՒԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

61. Պահառուն Ֆոնդի կառավարման իրավասությունը դադարելու և Ֆոնդի կառավարչի բացակայության և Ներդրումային ֆոնդերի մասին ՀՀ օրենքով նախատեսված Ֆոնդի դադարեցման հիմքերի առկայության դեպքում կազմակերպում է Ֆոնդի լուծարումը (դադարեցումը), իսկ Ֆոնդի միացման հիմքերի առկայության դեպքում՝ Ֆոնդի միացումը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ ֆոնդերի:

62. Պահառուն ինչպես լուծարման, այնպես էլ միացման գործընթացի արդյունքում իրականացնում է լուծարվող/միացող Ֆոնդի ակտիվների մարում և կազմակերպում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ Ֆոնդի փայերի թողարկում/ձեռքբերում, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերով:

63. Ֆոնդի կառավարչի Ֆոնդի կառավարման իրավասության դադարեցման դեպքում՝ Պահառուն Ներդրումային ֆոնդերի մասին ՀՀ օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնում է Ֆոնդի կառավարումը, կազմակերպում Ֆոնդի կառավարումն այլ Կառավարչի փոխանցելու գործընթացը, ինչպես նաև կազմակերպում է միևնույն կառավարչի այլ Ֆոնդին միացման գործընթացը: Այդ դեպքում Պահառուն Կառավարչին է փոխանցում Ֆոնդի վերաբերյալ իր մոտ առկա ամբողջ տեղեկատվությունը՝ պահպանելով «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված սահմանափակումները:

64. Պահառուն գործունեության դադարեցման մասին որոշումն ընդունելու պահից կամ Ֆոնդի կառավարչի և Պահառուի միջև կնքված պահառության պայմանագրի լուծման դեպքում Պահառուն կազմակերպում է Ֆոնդի պահառության հանձնված ակտիվների և Ֆոնդերի պահառուական գործունեությանը առնչվող և Պահառուի առևտրային գաղտնիք

չհանդիսացող փաստաթղթերի փոխանցումը այլ պահառուին ՀՀ օրենսդրությամբ և դրանց հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է